Կարծիք

Ժաննա Հարությունի Հարությունյանի՝ «Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991թթ.» թեմայով Ի.Գ.00.04 – Միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում հեղինակը փորձ է արել վերհանել իր աֆրիկյան նախկին գաղութներում Ֆրանսիայի վարած քաղաքականության սկզբունքները, առանձնահատկությունները, հիմքերն ու օրինաչափությունները, գնահատել Ֆրանսիայի գաղութային քաղաքական ռազմավարությունների ազդեցությունը աֆրիկյան նախկին գաղութ պետությունների զարգացման ընթացքի վրա: Հարկ է նկատել, որ ինչպես սույն աշխատանքը, այնպես էլ այս կարգի թեմատիկա ունեցող գիտական աշխատանքները օգտակար կարող են լինել, ի թիվս այլ նկատառումների, նաև հետևյալ տեսանկյուններից.

- Պատկերացում տալ Ֆրանսիայի կողմից իր քաղաքական ազդեցության պահպանման կամ ընդլայնման կոշտ ու փափուկ ուժային գործիքակազմի, դրա կիրառման ձևերի մասին (գործնական իմաստով):
- Էմպիրիկ նյութ պարունակել տերության և նրա ազդեցությունը կրող փոքր պետությունների միջև հարաբերությունների օրինաչափությունների մասին (տեսական իմաստով):

Ատենախոսության արժանիքների շարքում առանձնացնում ենք հետևյալները.

1. Ներկայացվում են Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագաղութացման իրադարձություններն ըստ աֆրիկյան երկրների: Այս համատեքստում անդրադարձ է կատարվում ապագաղութացման գործընթացը պայմանավորող այնպիսի գործոնների, ինչպիսիք են ինքնորոշման գաղափարի տարածումը գաղութների էլիտաների շրջանում, ֆրանսիական հասարակության առաջադեմ հատվածների վերաբերմունքը գաղութային համակարգին, Երկրորդ աշխարհամարտից հետո Ֆրանսիայի կողմից համաշխարհային գերտերության կարգավիճակի կորցնելն ու նոր գերտերությունների խրախուսողական ուղեգծերը ապագաղութացման գործընթացների հարցում:
2. Ներկայացվում են նախկին գաղութներում Ֆրանսիայի ազդեցության պահպանման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են ֆրանսիական ռազմաբազաները աֆրիկյան տարբեր երկներում, այդ երկրների զինված ուժերի սպայական կազմերը ֆրանսիացիներով համալրելու ուղեգիծը, Ֆրանս-Աֆրիկյան միության, իսկ այնուհետև «Ֆրանկաֆրիկա» կառույցի ստեղծումը, Ֆրանկաֆոնիայի միջազգային կազմակերպության ստեղծումը: Հարկ է նշել, որ ատենախոսին հիմնականում հաջողվել է ի ցույց դնել այդ

մեխանիզմների էությունը՝ Ֆրանսիայի ազդեցության պահպանման դիրքերից:

3. Ներկայացվում է Ֆրանսիայի և նրա նախկին գաղութների միջև հարաբերությունների օրակարգերը՝ ի ցույց դնելով այդ նախկին գաղութների էլիտաների քաղաքական երկվություններն առ այն, որ նրանք, մի կողմից, ձգտում էին թուլացնել կախվածությունը Ֆրանսիայից ու հանդես գալ որպես ինքնիշխան քաղաքական միավորներ, իսկ մյուս կողմից առանց ֆրանսիական տարաբնույթ աջակցության չէին կարողանում իրականացնել արդյունավետ կառավարում, արտաքին ու ներքին քաղաքականություն:
4. Ատենախոսության առանձին մասերում զարգացվում է այն թեզը, որ աֆրիկյան նախկին գաղութների վրա ազդեցության պահպանումը, ընդլայնումը և/կամ խորացումը Ֆրանսիայի համար արժևորվում էր այդ երկրների միջոցով Ֆրանսիայի քաղաքական կշիռը բարձրացնելու, այդ երկրների օգտակար հանածոների, առաջին հերթին ածխաջրածինների և մետաղների շահագործման, այդ երկրները որպես ֆրանսիական ապրանքների (այդ թվում զենք-զինամթերքի) արտահանման շուկա դիտարկելու տեսանկյուններից:
5. Վերհանվում է պայմանականորեն «Սև Աֆրիկա» բնորոշվող տարածաշրջանում Ֆրանսիայի ռազմական ներկայության հիմքերը, շարժառիթները, ձևերը՝ շեշտադրելով ռազմաքաղաքական ճգնաժամերի պայմաններում ռազմական ինտերվենցիաները, առանձին երկրների նկատմամբ ֆրանսիական ռազմական հովանավորչությունը, նշված տարածաշրջանի երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը: Այս տեսանկյունից քննարկվում է այն հանգամանքը, թե ինչպես էր կարողանում Ֆրանսիան իր ռազմական միջամտությունների ժամանակ ապահովել իր արևմտյան գործընկերների աջակցությունը կամ համաձայնություն, գործընկերներ, որոնք ինչ-ինչ հարցերում նաև մրցակիցներ էին (խոսքն առաջին հերթին ԱՄՆ-ի մասին է):
6. Վերհանվում է նաև «Սև Աֆրիկայում» Ֆրանսիայի տնտեսական ազդեցության հիմքերը, շարժառիթներն ու ձևերը՝ շեշտադրելով տասնամյակներ շարունակ արժույթի փոխանակման ֆիքսված կուրսի, օգտակար հանածոների, առաջին հերթին էներգետիկ հումքի մենաշնորհային արտահանման հանգամանքները:
7. Ի ցույց է դրվում աֆրիկյան տարածաշրջանում Ֆրանսիային 1970-ականներից նետված աշխարհաքաղաքական մարտահրավերները՝ ի դեմս ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, իսկ այնուհետև Չինաստանի ակտիվ ներթափանցման: Այս համատեքստում մատնացույց անելով հատկապես հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիայի մրցակցային թուլությունները ԱՄՆ-ի ու Չինաստանի համեմատ տնտեսական ազդեցության ոլորտում, զարգացվում է այն թեզը, որ հենց այս հանգամանքները ստիպեցին Ֆրանսիային նախկին գաղութների վրա ազդեցությունը պահպանելու համար դիմել երկու

ուղեգծերի՝ ֆրանս-աֆրիկյան համագործակցությունը Եվրոպական միության ծրագրերի շրջանակ բարձրացնելը և փափուկ ուժի գործիքակազմին ապավինելը:

8. Ատենախոսությունն աչքի է ընկնում հարուստ փաստական նյութով, ատենախոսն օգտագործել է մեծ քանակի գրականություն, այդ թվում՝ սկզբնաղբյուրներ, պաշտոնական կայքէջեր, վերլուծական գրականություն:

Աշխատանքում տեղ գտած թերություններից ու խնդիրներից հարկ ենք համարում առանձնացնել հետևյալները.

1. **Հետազոտության արդիականությունն ու գործնական նշանակությունը ոչ բավարար չափով է հիմնավորված՝ հատկապես հաշվի առնելով աշխատանքի ժամանակագրությունը 1991 թվականով սահմանափակելու հանգամանքը**: Արտաքին ծանր մարտահրավերների առջև կանգնած Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը խիստ կարիք ունի ամուր ու փաստարկված հետազոտական հենքի, որպեսզի արտաքին քաղաքական որոշումների կայացումը հիմնվի ոչ միայն դիվանագետների փորձի ու քաղաքական իշխանության ընկալումների ու նախապատվությունների վրա, այլև գիտականությամբ հարուստ հետազոտության միջոցով մշակված ռեկոմենդացիաների վրա: Ժաննա Հարությունյանն ընտրել է մի թեմա, որի արդիականությունը կամ հատկապես գործնական նշանակությունը առաջին հայացքից արդարացիորեն կարող է վիճելի լինել՝ հաշվի առնելով վերոգրյալ համոզմունքն առ այն, որ ինտելեկտուալ մարդկային կապիտալի հնարավորությունները պետք է նպատակային օգտագործել և ուղղորդել ազգային-պետական շահերի սպասարկմանը՝ բնավ չփորձելով սահմանափակել հետազոտողի գիտահետազոտական նախասիրությունները: Այդուհանդերձ կարծում ենք, որ թեման իսկապես արդիական է: Արդիական ու կարևոր է այն տեսանկյունից, որ Հայաստանը, լինելով քաղաքագիտական-միջազգայնագիտական տեսանկյունից փոքր պետություն, կարիք ունի գործնականում հասկանալ տերության կողմից փոքր պետության հանդեպ գործադրվող ազդեցութային գործիքները: Ատենախոսն իհարկե նշել է, որ իր աֆրիկյան քաղաքականությամբ Ֆրանսիան ձգտում է ամրապնդել իր դիրքերը միջազգային ասպարեզում, կարևորել է միգրացիոն քաղաքականության դերը միջազգային հարաբերություններում, ինչը Ֆրանսիայի պարագայում, կապված է իր նախկին գաղութների հետ հարաբերություններից: Բայց այստեղ կարևոր էր նաև նշելը, թե իր ուսումնասիրությունն ինչ է տալու, իր հետազոտական խնդիրների լուծումն ինչ տեսանկյունից է արժեքավոր (առանձնակի շեշտելով Հայաստանի արտաքին քաղաքական տեսանկյունը): Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ ներածության մեջ չի հիմնավորվում, թե ինչու՞ է աշխատանքի ժամանակագրության վերին շեմը

հասցվում մինչև 1991 թվականը: Ենթադրաբար ատենախոսը սահմանափակվում է Սառը պատերազմի ավարտով: Այդ դեպքում պետք էր հիմնավորել, որ Սառը պատերազմի ավարտը ջրբաժան է Ֆրանսիայի՝ իր նախկին գաղութների հանդեպ վարվող քաղաքականության մեջ, ինչը չի արվել: Ավելին՝ կարծում ենք, որ արդիականության ու գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կշահեր, եթե չլիներ այդ ժամանակագրական սահմանափակումը և ի ցույց դրվեին նախկին գաղութների վրա Ֆրանսիայի կողմից փափուկ ուժի գործադրման ներկայի՛ս գործիքները. չէ՞ որ ինքը՝ փափուկ ուժի կոնցեպտը գիտականորեն շրջանառվել սկսեց հենց 1990-ականների սկզբից: Նամանավանդ, որ ատենախոսության առանձին մասերում, հատկապես 3-րդ գլխում, քննարկումները երբեմն ընթանում են այնպիսի իրադարձությունների վերաբերյալ, որոնք վերաբերում են հետսառըպատերազմյան՝ 1990-ականների և նույնիսկ 2000-ականների ժամանակաշրջաններին (էջ 112-114):

2. **Առանձին մասերի շարադրանքը նկարագրողական, պատմողական է, հետազոտության ֆոկուսը ցրված է**: Հասկանալի է, որ պատմական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսության մեջ պատմական դեպքերի, գործընթացների առատությունն ու դրանց նկարագրման առաջնահերթությունը տարակուսելի չպետք է լինի: Այդուհանդերձ առավել կարևոր է, որ պատմական փաստերի շարադրանքը ընթերցողին պարզորոշ կերպով ցույց տա, թե ինչպես է լուծվում առաջադրված հետազոտական խնդիրը: Այսպես, 1-ին գլխի 1-ին ենթագլխի վերնագիրը (Ֆրանսիայի հանրապետության աֆրիկյան գաղութների ապագաղութացման առանձնահատկությունները) հուշում է, որ տվյալ ենթագլխի շարադրանքի շրջանակներում ատենախոսը խնդիր է դրել վերհանել այդ առանձնահատկությունները, այլ կերպ ասած՝ պատասխանել այն հարցին, թե որո՞նք էին Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագաղութացման առանձնահատկությունները: Սա հետազոտական հարցադրում է, որն իր հերթին ակնկալում է մի շարք ենթահարցադրումներ, օրինակ, ո՞րն էր Ֆրանսիայի գաղութների ապագաղութացման առանձնահատկությունը Բրիտանիայի գաղութների ապագաղութացման գործընթացի համեմատ, կամ Ֆրանսիայի գաղութ երկրների՝ իրենց գաղութային կարգավիճակի թոթափման գործընթացը ինչու՞ մի դեպքում ուղեկցվում էր ազատագրական պայքարով, մյուս դեպքում այլ կերպ, ինչո՞վ էին դրանք պայմանավորված և այլն: Շարադրանքի ընթերցման ընթացքում և արդյունքում հետազոտական պրոբլեմներ արտահայտող հարցերի պատասխանները պետք է հստակ նշմարվեն, նկատվեն, ի ցույց դրվեն: Մինչդեռ, օրինակ, հենց 1-ին գլխի 1-ին ենթագլխի պարագայում, ընթերցողից մեծ ջանք է պահանջվում թափանցել ու հասկանալ ոչ միայն հետազոտական հարցերի պատասխանները, այլև հետազոտական պրոբլեմներն ինքնին: Ատենախոսը հաճախ տրվում է մանրամասն տեղեկություններ հաղորդելու, մեջբերելու գայթակղությանը,

ինչը ավելի խճճում, բարդացնում է հետազոտական «ասելիքը»: Օրինակ՝ խոսելով 1944թ. Բրազավիլում գումարված ֆրանս-աֆրիկյան համաժողովի մասին՝ հեղինակը նշում է, որ համաժողովի նիստերը նախագահում էր Ֆրանսիայի գաղութային հարցերի պատասխանատու Ռենե Պլեվենան, Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի գեներալ-նահանգապետ Ֆելիքս Էբույեն, կոնֆերանսի գլխավոր քարտուղար Հենրի Լաուրենտինին: Սակայն նյութի հետագա շարադրանքն ընթերցելիս պարզ չի դառնում, թե այս տեղեկությունն ի՞նչ արժեք ուներ, ի՞նչ խնդրի լուծմանն է նպաստել, և հարցն էլ նրանում է, որ այս կարգի տեղեկատվական միջամտությունները աշխատանքում շատ են, ինչը դժվարացնում է նյութի մարսումը և ցրում հետազոտության ֆոկուսը: Նույն այս ենթագլխում ատենախոսը հանձն է առնում առարկայորեն ցույց տալ Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագաղութացման առանձնահատկությունները (էջ 24), հանձն է առնում դա անել Ֆրանսիայի հնդկաչինյան գաղութների ապագաղութացման գործընթացի հետ համեմատությամբ, ինչպես նաև աֆրիկյան գաղութների ապագաղութացման դեպքերի համեմատությամբ: Այնինչ այս հանձնառությանը հետևում է էջերով նկարագրություններ ինչպես հնդկաչինյան, այնպես էլ աֆրիկյան գաղութների ապագաղութացման գործընթացների մասին: Նկարագրվում է Վիետնամի, Ալժիրի, Մարոկկոյի, Թունիսի և այլ գաղութների ապագաղութացման պատմությունները, մեջ են բերվում բազմաթիվ տվյալներ, տեղեկություններ, սակայն այդ ամենի քննարկում, դեպքային վերլուծություն, համեմատական վերլուծություն տեղի չի ունենում և ի վերջո պարզորոշ մատնացույց չի անում իր հանձնառած առանձնահատկությունները: Ենթագլխի միջին հատվածում ատենախոսը հայտարարում է, որ Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագաղութացման գործընթացը աչքի էր ընկնում մի շարք յուրահատկություններով և նշում է երկու այդպիսի յուրահատկություն. առաջին՝ որ գաղութների անկախությունը ճանաչելով հանդերձ նրանց տնտեսական կախվածության մեջ էր պահում, երկրորդ՝ փորձում էր ստեղծել մեխանիզմներ նախկին գաղութների հետ համագործակցության ու իր ազդեցության տակ պահելու համար (էջ 35-36): Նախ՝ անորոշ են մնում, թե այդ ինչ մեխանիզմներ են, երկրորդ՝ հետազոտական տրամաբանությունը պահանջում է, որ ապագաղութացման յուրահատկությունների վերաբերյալ արված հայտարարությանը պետք է հաջորդեր վերլուծական բնույթի շարադրանք, թե որտեղ ու ինչպես են դրսևորվել այդ յուրահատկությունները: Մինչդեռ այդ կարևոր հայտարարությանը հաջորդում է Ալժիրի անկախացման պատմության 7 էջանոց շարադրանք (էջ 36-43)՝ ամենայն մանրամասնություններով:

3. **Ատենախոսության առանձին մասերում առկա են «հետազոտական խնդիր – շարադրանք (պնդում-փաստարկ-փաստ) - եզրակացություն շղթայի բացակայություն կամ անկատարություն:** Այս դիտողությունը կիրառելի է հատկապես ատենախոսության 2-րդ գլխի 1-ին ենթագլխի շարադրանքի նկատմամբ: Աշխատանքը կշահեր, եթե սույն ենթագլուխն սկսվեր

հետազոտական պրոբլեմի սահմանմամբ: Բուն պրոբլեմը արտահայտված է հենց ենթագլխի վերնագրում և իր մեջ պարունակում է հետազոտական այն հարցադրումը, թե ո՞րն էր Հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարության բովանդակությունը: Աշխատանքը կշահեր, եթե սույն ենթագլխում տեղ գտած մեծ քանակության փաստերը, անհրաժեշտ լրացուցիչ այլ փաստերի հետ միասին շարվեին, շարադրվեին այն կառուցվածքով ու տրամաբանությամբ, որ հանգեցնեին վերոնշյալ հետազոտական հարցադրման պատասխանին: Հեղինակի կողմից օգտագործված գրականության հարուստ ցանկից պարզ է դառնում, որ նա տիրապետել է փաստական հարուստ նյութի, ուստի համոզված ենք, որ Ժաննա Հարությունյանը կարող էր շարադրանքը կենտրոնացնել հետազոտական նշված հարցադրման պատասխանին տանող մի շարք ենթահարցադրումների վրա, օրինակ՝ ազդեցության պահպանման, ընդլայնման կամ խորացման ի՞նչ գործիքներ էր կիրառում Ֆրանսիան իր հյուսիս-աֆրիկյան նախկին գաղութների նկատմամբ, ինչո՞վ էին տարբերվում նրա գործադրած գործիքները երկրից երկիր, ինչի՞ էր ձգտում Ֆրանսիան և ինչի՞ հասավ, որքանո՞վ էին արդյունավետ այդ գործիքները և այլն: Թեև ենթագլխի վերջում ատենախոսը նշում է, որ այս տարածաշրջանում Ֆրանսիայի քաղաքականությունը փաստորեն ձախողվել էր, բայց այդ եզրահանգման հիմքում չենք տեսնում փաստարկված պատճառների ամուր շղթա: Մինչդեռ այս ենթագլխում ականատեսն ենք պնդումների, գնահատականների, գործընթացների հախուռն շարադրանքի, որքան էլ այդ շարադրանքի մեջ լինեն արժեքավոր փաստեր: Այսպես, ենթագլխում ցույց է տրվում Մաղրիբի երկների ձգտումը՝ ներգրավվելու կապիտալիստական ու սոցիալիստական բլոկներին չմիավորվելու շարժման մեջ, այնուհետև ներկայացվում է այդ պետությունների ներգրավումը միջազգային տարբեր կազմակերպություններում ու ազդեցության խմբերում (ՄԱԿ, Աֆրիկյան միություն, Իսլամական կոնֆերանս), անդրադարձ է կատարվում Եվրոպայում մահմեդականների խնդիրներին, տևական անդրադարձ է կատարվում ֆրանս-ալժիրյան հարաբերություններին որպես պատմական գործընթաց (և ոչ Ֆրանսիայի ազդեցության ռազմավարության տեսանկյունից), ավելի քիչ՝ Ֆրանսիա-Մարոկկո, Ֆրանսիա-Թունիս հարաբերություններին: Այս ամենն, ինչ խոսք, օրգանական կապ ունի ենթագլխի հետազոտական խնդրի հետ՝ այն է՝ Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը հյուսիս-աֆրիկյան նախկին գաղութներում, բայց նման շարադրանքը չի տանում կոնկրետ այս խնդրի լուծմանը, թեև ենթագլխի առանձին մասերում ընդհանրական ու հպանցիկ ձևով անդրադարձ արվում է փափուկ ուժի միջոցով իր ազդեցությունը պահպանելու ձգտմանը, ինչպես նաև հիշատակվում են ազդեցության որոշ միջոցներ, որոնցից են, օրինակ՝ Ալժիրի կառավարությունում փորձառու պաշտոնյաների պակասը, Ֆրանսիայի ռազմական ներկայությունը Ալժիրում, անհրաժեշտ ֆինանսական օգնությունն

Ալժիրին և այլն. մինչդեռ Մարոկկոյի վերաբերյալ շարադրանքում ազդեցության միջոցների մասին դատողություն կամ, առավել ևս, քննարկում չի արվում:

4. **Մտքային հակասություններ ու անհամապատասխանություններ են նկատվում ատենախոսության առանձին հատվածներում:** Այսպես, աշխատանքի 1-ին գլխի 2-րդ ենթագլխում ատենախոսը գրում է, որ եթե Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականությունը ուղղված էր Աֆրիկայի տնտեսական շահագործմանը, ապա Ֆրանսիան շեշտը դնում էր մշակութային ու քաղաքական ձուլման վրա (էջ 47): Նշված պնդումից անմիջապես հետո (նույն էջը) ատենախոսը գրում է. «Աֆրիկյան գաղութային իր հատվածում կոլոնիալ իշխանության ամրապնդման համար ֆրանսիական կառավարությունը հիմնում էր տնտեսական ու քաղաքական ուրույն համակարգեր, որոնց հիմնական նպատակներից էր Ֆրանսիայի տնտեսական շահերի ապահովումը գաղութների շահագործման հաշվին: Այդ պատճառով աֆրիկյան պետությունների տնտեսությունը անկում էր ապրում...»: Այսպիսով այստեղ նախ երկու մտքերն են իրար հակասում (միտք 1 – Մեծ Բրիտանիան էր, այլ ոչ Ֆրանսիան, տնտեսապես շահագործում իր նախկին գաղութներին, միտք 2 – Ֆրանսիան տնտեսապես շահագործում էր իր նախկին գաղութներին), երկրորդ՝ փաստերով ու օրինակներով ի ցույց չի դրվում նախկին գաղութներին տնտեսական կախվածության մեջ պահելու Ֆրանսիայի գործելակերպը: Ատենախոսության 3-րդ գլխի 2-րդ ենթագլխի շարադրանքը ընդհանուր առմամբ կտրված է Ֆրանսիայի աֆրիկյան քաղաքականության համատեքստից: Ենթագլուխը, որ վերնագրված է «Ֆրանսիայի գործիքային մշակութային քաղաքականությունը», իրավամբ մատնացույց է անում ֆրանսերեն լեզվի, ֆրանսիական մշակույթի տարածումը՝ որպես փափուկ ուժի գործադրման արդյունավետ գործիք: Սակայն հատկանշական է, որ նշված թեմայի քննարկումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ առանց մշակույթի գործիքայնացման թեման աֆրիկյան նախկին գաղութների վրա հիմնավոր արտապատկերելու, այլ մերթընդմերթ նշելով, որ Աֆրիկայում ևս Ֆրանսիան կիրառում է իր մշակութային փափուկ ուժը Ֆրանկոֆոնիայի կազմակերպության, «Ալյանս Ֆրանսեզ» կրթական կազմակերպության և այլ միջոցներով:

5. **Առանձին եզրակացություններ ոչ այնքան եզրակացություններ են՝ հիմքում ունենալով գիտական քննարկում, որքան պատմական իրողությունների ուղղակի արձանագրումներ են (օրինակ՝ եզրակացություն 2, 5, 8):**

Եզրակացություն: Ատենախոսության թեման բավականին բարդ է: Ատենախոսը գործ է ունեցել աֆրիկյան երկու և ավելի տասնյակ երկրներին առնչվող նյութի հետ, թեման առնչվել է ոչ հայկական իրականությանը, չի շոշափել մեզ քաջածանոթ իրողությունները, որպիսի պայմաններում դժվար է եղել ատենախոսության բոլոր մասերում միաժամանակ ապահովել թե՛ փաստական հարուստ նյութ, թե՛ կուռ

գիտական կառուցվածք: Նշված թերություններն ու խնդիրները չնչին չեն, բայցևայնպես, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ատենախոսը կարողացել է իր բարձրացրած խնդիրների համատեքստում անդրադառնալ վերաբերելի իրողությունների ու իրադարձությունների, քննարկել ու վերհանել աֆրիկյան նախկին գաղութներում Ֆրանսիայի քաղաքականության հիմքերը, օրինաչափությունները, մեխանիզմներն ու դինամիկան, գտնում ենք, որ Ժաննա Հարությունյանը հասուն է որպես հետազոտող և ի վիճակի է շտկել այնպիսի խնդիրներ, որպիսիք մեր կողմից արձանագրվել են հատկապես ատենախոսության որոշ մասերում շարադրանքի գիտական համակարգվածության հետ կապված:

*Ուստի, ելնելով վերոնշյալից, գտնում ենք, որ Ժաննա Հարությունյանն **արժանի է** իր հայցած գիտական աստիճանին:*

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,

պատմական գիտությունների թեկնածու

Մ.Ա.Սողոմոնյան

Պատմ. գիտ. թեկնածու, դոց. Մ.Ա. Սողոմոնյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու՝ Մ. Վ. Հովհաննիսյան

ք. Երևան, « 15 » սեպտեմբեր 2022 թ.